## ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

## <<ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՐԳԻ>> /ԱՅՍՈՒՀԵՏԵՎ՝ ԿԱՐԳ/ ՄԱՍԻՆ

/ՀՀ ԿԳ նախարարի 2010 թ. օգոստոսի 2-ի N 1262-Ն հրաման/

1. Կարգի վերնագրում նշված է <<թափուր տեղ>> իսկ կարգի շարադրանքում՝ <<թափուր աշխատատեղ>>:
2. Կարգի 1-ին կետում նշված չէ, որ ուսումնական հաստատությունները պետք է օրինակելի կարգի հիման վրա մշակեն և հաստատեն իրենց կարգը : /Օրինակ՝ ինչպես կանոնադրությունը, ուսպլանը և այլն/ :
   Ըստ «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական՝ ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 68-րդ կետի 4-րդ ենթակետի՝ տնօրենը նախարարության կողմից հաստատված ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգի հիման վրա մշակում և խորհրդի հաստատմանն է ներկայացնում հանրակրթական դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի կարգը ;
3. Կարգի 1-ին կետում <<հաստատությունում>> բառը փոխարինել <<հաստատության>> բառով :
4. Կարգի 1-ին կետում <<Գործատուի և աշխատողի միջև>> իրավահարաբերություն չի կարող լինել, քանի դեռ նրանց միջև աշխատանքային պայմանագիր կնքված չէ : Հետևաբար պետք է լինի <<գործատուի և մրցույթի մասնակցի միջև>> բառերով, ընդ որում կարգի 1-ին կետի նախադասության մեջ սխալ է «հարաբերություններ» տերմինը, քանզի հարաբերությունը վարքագծի կանոն չէ: Պետք է լինի «իրավահարաբերությունները»:
5. Կարգի 2.1 կետը հարկ է վերաշարադրել /խմբագրել/ հետևյալ կերպ. <<Ուսուցչի թափուր աշխատատեղ առաջանալու դեպքում տնօրենը դասաժամերը բաշխում է նույն դպրոցում համատեղությամբ չաշխատող համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող մասնագետին, եթե վերջինիս լրիվ դասաժամային ծանրաբեռնվածությունը ապահովված չէ օրենքով սահմանված մեկ դրույքով :
6. Կարգի 3-րդ կետից կամ պետք է հանել <<ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի պաշտոնի նկարագրով>> դրույթը կամ պետք է փոփոխություն կատարել ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 14-ի N 1391-Ն որոշմամբ հաստատված 4-րդ հավելվածի 4-րդ՝ <<Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցիչը>> գլխում, հանելով որպես որակավորման պահանջ, նշված <<կամ միջին մասնագիտական կրթություն>> բառերը :
7. Կարգի 4-րդ կետի 1-ին ենթակետի փակագծում, որպես պարզաբանում, պետք է ավելացնել (նպատակային արձակուրդում գտնվող աշխատողի փոխարեն՝ մինչև 3 տարի տևողությամբ), որպեսզի հասկանալի լինի, թե խոսքը որ դեպքին է առնչվում : /ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 171 :/
8. Կարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետում հարկ է << «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով>> հղման անորոշությունը հստակեցնել հետևյալ կերպ. <<«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասով>>;
9. Կարգի 7-րդ կետում սխալ է <<գրավոր ստուգման դեպքում>> և <<բանավորի դեպքում>> շարադրանքը : Եթե ստուգումը անցկացվում է երկու փուլով՝ գրավոր և բանավոր, ապա <<դեպքում>> բառը քերականական սխալ կիրառման համար առաջացնում է այն թյուրըմբռնումը, թե ստուգումը կարող է լինել կամ գրավոր, կամ՝ բանավոր : Հետևաբար պետք է լինի. <<գրավոր ստուգման ժամանակ>> և <<բանավոր ստուգման ժամանակ>> :

10. Կարգի 8-րդ կետը առաջարկում ենք վերախմբագրել, քանի որ.

- Մի քանի անգամ մամուլով, հեռուստատեսությամբ, ռադիոյով հայտարարություն հրապարակելը կապված է ծախսերի հետ: Առավել ևս, երբ մրցույթը չի կայանում և նորից է մրցույթ հայտարարվում: Հետևաբար <<ԶԼՄ-ներով (մամուլ, հեռուստատեսություն, ռադիո և այլ միջոցներ)>> հայտարարություն տալու պահանջը պետք է հանվի և փոխարենը այն պահովեն վերադաս մարմինները՝ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը և մարզպետարանը
- Անհարկի ձգձգումներից խուսափելու նպատակով, ինչպես նաև ուսուցչի թափուր աշխատատեղը համալրելու համար մրցույթը ավելի արագ, օպերատիվ ու սեղմ ժամկետներում կազմակերպելու և անցկացնելու համար /ի վերջո ուսումնական աշխատանքների խաթարման խնդիր կարող է առաջանալ/, հարկ է, որ կարգի 8-րդ, 8.1-ին, 9-րդ, 10-րդ և 13-րդ կետերի պահանջները լինեն միասնական, այն է՝ մեկ փուլով ապահովվի տեղեկացման, հայտարարության ու պահանջվող փաստաթղթերի ընդունման խնդիրը:
- 8-րդ կետը ցանկալի է շարադրել հետևյալ կերպ՝ ուժը կորցրած ճանաչելով 8.1-ին, 9-րդ, 10-րդ և 13-րդ կետերը. << Ուսուցչի թափուր տեղ առաջանալու օրից երկու աշխատանքային օրվա ընթացքում տնօրենը այդ մասին պաշտոնական գրությամբ տեղեկացնում է լիազորված պետական մարմնին՝ նշելով թափուր պաշտոնի /առարկայի/ անվանումը և ժամերի քանակը: Լիազորված պետական մարմինը երկու աշխատանքային օրվա ընթացքում պաշտոնական գրությամբ տեղեկացնում է ՀՀ ԿԳ նախարարությանը՝ վերջինիս պաշտոնական կայքէջում համապատասխան հայտարարություն հրապարակելու համար: Հայտարարության տեքստի բովանդակությունը, որը մշակվում է ՀՀ ԿԳ նախարարության կողմից, միասնական է բոլոր ուսումնական հաստատությունների համար>>:

11. Կարգի 11-րդ կետը հարկ է վերաշարադրել հետևյալ կերպ. <<Մրցույթին մասնակցելու մասին հայտերն ընդունվում են տվյալ դպրոցում, ՀՀ ԿԳ նախարարության պաշտոնական կայքէջում հայտարարության հրապարակման օրվանից մեկ շաբաթյա ժամկետում>>:
12. Կարգի 12-րդ կետը հարկ է վերաշարադրել հետևյալ կերպ. <<Մրցույթը նշանակվում է փաստաթղթերի ընդունման ավարտից հետո շաբաթվա երկրորդ աշխատանքային օրը>>:
13. Կարգի 14-րդ կետում հարկ է հավելել. <<Հանձնաժողովը ներկայացված փաստաթղթերի պատճենները համեմատում է բնօրինակների հետ և ընդունում դրանք: Հանձնաժողովի նախագահը պատճենների վրա գրառում է <<համեմատված է բնօրինակի հետ>>, կնիքում, ստորագրում է դրանք, իսկ բնօրինակները ետ վերադարձնում մրցույթի մասնակցին:
14. Կարգի 17-րդ կետում կամ պետք է ավելացնել <<և հաստատում է մրցույթի հանձնաժողովների անվանացանկը>> կամ՝ ուղղակի հանել <<և հաստատում է մրցույթի անվանացանկը>> պահանջը:
15. Կարգում նշված չէ, թե հանձնաժողովի որոշումները և արձանագրությունները որտեղ են ամրագրվում, ինչ կարգով են պահպանվում, ինչ ժամկետներում են արխիվացվում, ով է մրցույթի փաստաթղթային փաթեթի պատասխանատուն և այլն:
16. Կարգի 20-րդ, 26-րդ և 27-րդ կետերում ամրագրված է, որ <<Հանձնաժողովը մշակում է գրավոր և բանավոր առաջադրանքները... Հանձնաժողովը յուրաքանչյուր մրցույթի համար կազմում է թեստերի 3 կամ 4 տարբերակ... Հանձնաժողովի որոշմամբ գրավոր աշխատանքի համար տրվում է...>>:

    Նշյալ իրավասությունները հանձնաժողովին վերապահելը իրավական առումով կհանգեցնի սուբյեկտիվիզմի և իր մեջ կբովանդակի անհատական՝ կանխակալ վերաբերմունքի դրսևորում: ՀՀ օրենսդրությամբ ու միջազգային նորմերով քաղաքացիական ու համայնքային ծառայողների, քաղաքացիական աշխատողների /օրինակ՝ ուսումնական հաստատության տնօրենի/ մասնագիտական գիտելիքների համապատասխանության որոշման համար կիրառվում են միասնական

հարցաշարեր, ինչպես նաև հստակ է և առաջադրանքների քանակը, և ստուգման տևողությունը:
Ցանկալի է, որ ուսուցչի մրցույթի համար ՀՀ ԿԳ նախարարությունը մշակի և հաստատի տարիկայական հարցաշար, իսկ կարգով հստակ ամրագրվի առաջադրանքների միասնական քանակ և ստուգման միասնական տևողություն: Այդպիսի դրույթի կիրառման արդյունքում հանձնաժողովի աշխատանքները կկրեն սուկ տեխնիկական բնույթ, ինչպես նաև կբարձրանա մրցույթի օբյեկտիվությունը:

17. Կարգի 22-րդ կետում, որպես հանձնաժողովի անդամ, լիազորված պետական մարմնի ներկայացուցիչ ընդգրկելու պահանջը առաջարկում ենք հանել, որովհետև լիազորված պետական մարմնի ներկայացուցչի մասնակցությունը հանձնաժողովի աշխատանքներին երբեմն կաշկանդում է հանձնաժողովի նախագահին վերապահության առումով ցուցումներ տալով:
Առաջարկում ենք լիազորված պետական մարմնի ներկայացուցչին մրցույթի օրը հանձնաժողովի աշխատանքներին ընդգրկել դիտորդի կարգավիճակով, որը միաժամանակ կապահովի «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետի պահանջի կատարումը:
18. Կարգի 21-րդ կետում նշված է, որ մրցութային հանձնաժողովը կազմված է 6 կամ 7 անդամից, մինչդեռ 22-րդ կետում 8 անդամի հնարավորություն է թվարկվում: Ընդ որում՝ <<կազմված>> բառը եզանակային սխալ հոլովում է, պետք է լինի՝ <<կազմվում է>>:
19. Կարգի 22-րդ կետում «մեկ ուսուցիչ» բառերը փոխարինել «մեկ մասնագետ ուսուցիչ» բառերով իսկ «Եթե հաստատությունը չունի մասնագետ ուսուցիչ, այլ հաստատություններից ընդգրկվում է՝ երկու ներկայացուցիչ», նախադասության մեջ՝ <<...այլ հաստատություններից ընդգրկվում է՝ երկու մասնագետ ուսուցիչ>>:
20. Կարգի 25-րդ կետի 3-րդ ենթակետը ավելորդ ձևակերպում է:
21. Կարգի 25-րդ կետի 5-րդ ենթակետի նախադասության միտքը ավարտուն չէ, պետք է լինի <<Գրավոր աշխատանքի ավարտից 15 րոպե առաջ հանձնաժողովը մասնակցին հերթին/ հիշեցնում է մնացած ժամանակի մասին>>:
22. Կարգի 27-րդ կետի 1-ին ենթակետում նշված է, որ << յուրաքանչյուր թեստային առաջադրանք ունի 3 կամ 4 այլընտրանքային պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ>>, մինչդեռ եթե բոլոր պատասխաններն այլընտրանքային են, ապա ինչպես մեկը ճիշտ կլինի /ընդ որում՝ <<այլընտրանքային>> բառի կիրառումը տվյալ դեպքում սխալ է, իսկ <<ունի>> բառը եզանակային սխալ հոլովում է, պետք է լինի՝ << պետք է ունենա >>:

Հարկ է ձևակերպել. << յուրաքանչյուր թեստային առաջադրանք պետք է ունենա 3 կամ 4 ենթադրյալ պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ>>
23. Կարգի 27-րդ կետի 6-րդ ենթակետում նշվում է, որ << ոչ թեստային առաջադրանքները ստուգվում են հանձնաժողովի մասնագետ անդամների կողմից միասին և գնահատվում են 10 բալային համակարգով>>, իսկ 7-րդ ենթակետում ասվում է, որ <<գրավոր աշխատանքի գնահատականի տակ ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները>>: Եթե նրանք չեն ստուգել, ապա ինչի համար պետք է ստորագրեն:
24. Կարգի 27-րդ կետի 7-րդ ենթակետում ասվում է, որ <<գրավոր աշխատանքի գնահատականի տակ ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները>>, մինչդեռ պետք է ավելացնել <<հանձնաժողովի ներկա բոլոր անդամները>>:
25. Կարգում հստակ չէ, երբ ոչ մի մասնակից չի հաղթահարում գրավորի շեմը, ապա հերթական արձանագրություն կազմվում է, թե ոչ:
26. Կարգի 36-րդ կետի 3-րդ ենթակետում նշված չէ, որ հանձնաժողովը կարող է մասնակցին ուղղել մինչև 5 հարակից հարց <<տոմսի հարցերի համատեքստում>>:
27. Կարգի 39-րդ կետի 11-րդ ենթակետում պետք է ավելացնել << հանձնաժողովի ներկա անդամների ստորագրությունները>>:
28. Կարգի 42-րդ և 43-րդ կետերում անհասկանալի է <<մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցներ>> հոգնակի ձևի կիրառումը: Եթե հաղթող է համարվում այն

մասնակիցը, որը ստացել է առնվազն 4 «կողմ» ձայն, ապա ինչպես կարող է լինել մեկից ավելի հաղթող: Կամ լրիվ հակառակը. եթե մեկից ավելի մասնակից հաղթահարում է և գրավոր, և բանավոր փուլերը, ապա պետք հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի տրամադրվի մեկից ավելի անհատական քվեաթերթ և քվեարկվի մեկից ավելի:

29. ՀՀ ԿԳ նախարարի 2010 թ. օգոստոսի 2-ի N 1262-Ն հրամանով հաստատված <<Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգը>> առաջարկում ենք բովանդակային և կազմակերպչական առումով բարեփոխել ու պարզեցնել:

Մասնավորապես.

1) Հանձնաժողովին զերծ պահել այդքան նիստեր (շուրջ 4 նիստ) գումարելու և որոշումներ ընդունելու բարդությունից, առավել ևս, հեռավոր բնակավայրերի դպրոցներում մասնագետ ուսուցիչ չլինելու պատճառով հանձնաժողովը համալրվում է դպրոցների ուսուցիչներից, որոնք հաճախ չեն մասնակցում նիստերին:

Առաջարկում ենք հայտարարություն տալու, գործերի ընդունման և մրցույթի նախապատրաստման կազմակերպումը վերապահել տնօրեններին և միայն մրցույթի անցկացման օրը հանձնաժողովի նիստ գումարել՝ փաստաթղթերն ուսումնասիրելու, մրցույթին թույլատրելու, մրցույթ անցկացնելու և մրցույթում հաղթող (կամ չհաղթող, կամ չկայացած) ճանաչելու մասին որոշումներ ընդունելու մասին օրակարգային հարցերով:

2) Հստակեցնել <<ուսուցչի թափուր տեղ>> առաջանալու հանգամանքն ու հիմքերը:

3) Փոփոխություն կատարել ժամկետների մեջ, քանի որ ուսուցչի թափուր տեղ առաջանալու պահից մինչև աշխատանքային պայմանագրի կնքումը տևում է 45-50 օր:

4) Սահմանել հանձնաժողովի ձևավորման ժամկետը:

Մտահոգիչ է նաև այն, որ

<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքով սահմանված է, որ ուսուցիչը մանկավարժական աշխատող է, իսկ ՀՀ կառավարության 2010 թ. նոյեմբերի 14-ի N 1391-Ն որոշմամբ հաստատվել է <<Հայաստանի Հանրապետության ընդհանուր ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը և նկարագրերը>>, ըստ որի կա 11 մանկավարժական պաշտոն: Դրանցից միայն տնօրենն ու ուսուցիչն են նշանակվում մրցույթի հիմքով, իսկ մնացած 9 պաշտոնների համար մրցույթ սահմանված չէ /կինդեկը նշանակվում է մրցույթով, սակայն դրա կարգը չկա/ :